


**«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2013թ-ի տարեկան  
ԶԵԿՈՒՅՑ**

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) շինանյութեր արտադրող հայաստանյան խոշոր ընկերությունն է: Մասնավորապես, 2013թ-ի տարեկան (այսուհետ՝ Հաշվետու ժամանակաշրջան), Ընկերությունը շարունակել է արտադրել հետևյալ տեսակի արտադրատեսակներ (ներկեր, լաքեր, չոր շաղախներ (մածիկներ և կապակցող նյութեր), բետոնե բլոկներ (պատերի ներքին և արտաքին բետոնե բլոկներ, մայթեզրի քարեր և մայթի սալիկներ), ինչպես նաև սեփական հանքերից արդյունահանահանել և որպես հումք օգտագործել է ավազ, կավիճ և գիպս: Արտադրությունից բացի Ընկերությունը զբաղվել է սպրանքների ներկրմամբ և մանրածախ վաճառքով: Ընկերությունը նաև կատարել է ներքին և արտաքին շինարարական աշխատանքներ և դիզայն: 2012թ-ից Ընկերությունը համագործակցում է իսպանական Կորսան Կորվիամ ընկերության հետ՝ ներգրավվելով Հայաստանի Հյուսիս - Հարավ ավտոմայրուղու շինարարական աշխատանքներում: Հաշվետու ժամանակաշրջանում այս ուղղությամբ Ընկերությունը կատարել է մասնավորապես հետևյալ աշխատանքները՝ ճանապարհաշինական նյութերի (ցեմենտ, ավազ, գլաքար, բետոն) տեղափոխում, փորման ծառայություն, ճանապարհաշինական աշխատանքների սպասարկում և դրա հետ կապված որոշակի շինարարական ապրանքների մատակարարում: Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության իրացման շրջանառությունը՝ ըստ գործունեության տեսակների հետևյալն են՝

<i>000 դրամ</i>	<i>Հաշվետու ժամանակաշրջան 2013թ,</i>
<b>Ընդամենը, այդ թվում՝</b>	<b>4,373,270</b>
Արտադրանքի վաճառքից հասույթ	2,368,723
Սպրանքների վաճառքից հասույթ	1,521,167
Շինարարական աշխատանքների կատարումից և ծառայությունների մատուցումից հասույթ	483,380

Ընկերությունը շարունակում է ընդլայնման և աճի զարգացման տեմպերի պահպանման իր ռազմավարությունը և 2014թ-ին նախատեսում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի, Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի, որոնց ուղղությամբ արդեն ստորագրվել են հուշագրեր և (կամ) պայմանագրեր: 2014թ-ին ստացվել է Համահայկական բանկի վարկային միջոցների առաջին մասը, որով կատարվել են կավճի վերամշակման արտադրամասի հիմնական միջոցների ձեռքբերման և սկսվել են շինարարական աշխատանքներ:



**Պ. Բաղայան**

**«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատու անձանց  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն հայտարարությունը տրվում է «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2013թ. տարեկան (այսուհետ՝ Հաշվետու ժամանակաշրջան) ֆինանսական հաշվետվությունների կապակցությամբ:

Մենք ընդունում ենք մեր պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ներկայացման համար:

Մեր գիտելիքներն ու համոզվածությունը հիմք ընդունելով, պաշտոնապես հայտարարում ենք՝

Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, ինչպես նաև

- Հաշվետու ժամանակաշրջանում չեն գրանցվել,
  - Ղեկավարության կամ աշխատակիցներից կողմից ներքին վերահսկողական համակարգի վրա կարևոր նշանակություն ունեցող խախտումներ և խարդախության դեպքեր,
  - Գործող օրենսդրության դրույթների խախտման կամ ոչ լրիվ կիրառման մասին կարգավորող մարմինների ծանուցագրեր, որոնք կարող էին ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն ունենալ,
- Մենք չունենք այնպիսի պլաններ կամ մտադրություններ, որոնք կարող են էապես փոփոխել ֆինանսական հաշվետվություններում արտացոլված ակտիվների ու պարտավորությունների դասակարգումը կամ հաշվեկշռային արժեքը:
- Մենք չենք պլանավորում հրաժարվել գործող որևէ ծառայության մատուցումից կամ չունենք այնպիսի պլաններ ու մտադրություններ, որոնք ավելորդ կամ հնացած պաշարների առաջացման պատճառ կհանդիսանան, ինչպես նաև պաշարները գրանցված չեն իրացման զուտ արժեքից բարձր արժեքով:
- Ընկերությունը իր բոլոր ակտիվների նկատմամբ ունի վերահսկման իրավունք, և գոյություն չունի այդ ակտիվների վրա կալանք դնելու որևէ իրավունք:
- Մեր կողմից պատշաճ ձևով ֆինանսական հաշվետվություններում հաշվառվել կամ արտացոլվել են բոլոր պարտավորությունները:
- Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և մինչև սույն նամակի ստորագրման պահը տեղ չեն գտել այնպիսի դեպքեր, որոնք պահանջում են ֆինանսական հաշվետվությունների ճշգրտում կամ լրացում, կամ լրացուցիչ բացահայտում:
- Ընկերությունը ներգրավված չի եղել որևէ դատական պրոցեսում:
- Կազմակերպությունը գործել է կնքված պայմանագրերի պայմանների համապատասխան, որոնց չկատարումը կարող նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Կազմակերպության բոլոր իրացման գործարքները ավարտված բնույթի են և բացառվում են դրանց վերանայում:
- Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված վաճառքների գծով դեբիտորական պարտքերը իրենցից ներկայացնում են դեբիտորների առկա պարտքերը, որոնք առաջացել են մինչև հաշվետու ամսաթիվը կամ հաշվետու ամսաթվի դրությամբ:
- Ֆինանսական հաշվետվությունները բացահայտում են մեզ հայտնի բոլոր հարցերը, որոնք կարող են ազդել կազմակերպության ապագայում գործունեություն ծավալելու

հնարավորությունների վրա, ներառյալ էական պայմանները և դեպքերը, մեր պլանները և մտադրությունները:

- Այն դեպքերում, երբ ստացվել է կապակցված կողմերի առկայություն, մենք բացահայտել ենք կապակցված կողմերի հետ կապված բոլոր էական գործառնությունների բնույթը:
- Մեր կարծիքով, տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական խեղաթյուրումներ:
- Մենք հաստատում ենք, որ պատասխանատվություն ենք կրում ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու համար:

Հ/Հ	Անուն ազգանուն	Պաշտոնը և այլ նկարագրություն	Պատասխանատու անձի պատասխանատվության շրջանակը
1	Սամվել Բեգլարյան	Տնօրենների խորհրդի նախագահ 99.91% բաժնետոմսերի սեփականատեր	Բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն
2	Պապ Բադայան	Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր գործադիր տնօրեն	Տնօրենների խորհրդի և ընթացիկ գործունեության ղեկավարման օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված պատասխանատվություն
3	Սերգեյ Դուրախանյան	ԹՄ Աուդիտ ՓԲԸ լիազոր ֆինանսական տնօրեն	Ընթացիկ գործունեության իրականացման օրենսդրությամբ, կանոնադրությամբ, ներքին կանոններով, և պայմանագրով սահմանված պատասխանատվություն
4	Սերգեյ Սահակյան	ԹՄ Աուդիտ ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ գլխավոր հաշվապահ	Ընթացիկ գործունեության իրականացման օրենսդրությամբ, կանոնադրությամբ, ներքին կանոններով, և պայմանագրով սահմանված պատասխանատվություն
5	Արմեն Բալասանյան	Վերստուգող	Ընթացիկ գործունեության իրականացման կանոնադրությամբ և ներքին կանոններով սահմանված պատասխանատվություն

